

Լույս է տեսել «Հայկազյան հայագիտական հանդեսի» 9-րդ պրակը: Ինչպես նախորդ համարները, այնպես էլ սա արտացոլում է հայրենիքի և սփյուռքի հայագիտության համագործակցության ուժեղացման միտումները:

Հայ ճարտարապետության պատմությունը սփյուռքահայությանը հետաքրքրող նյութերից է: «Հայկազյան հայագիտական հանդեսի» այս համարում տպագրվել է Գավիթ Կերտմենչյանի հոդվածը միջնադարյան Հայաստանի ֆաղափների առևտրա-հասարակական կենտրոնների ճարտարապետության և ֆաղափաշինության առանձնահատկությունների մասին: Այնտեղ խոսվում է Հայաստանի հյուսիսային միջազգային տարանցիկ առևտրի ճանապարհի վրա ընկած Անի, Լոռի, Կարս, Կարին և Բարերդ (Քայրուղ) ֆաղափների հատկազոտային, ծավալա-տարածական և ֆաղափաշինական որոշ սկզբունքների մասին: «Անիի առևտրա-հասարակական համալիրում գտնվող կենցաղային, արտադրական, իջևժանային և առևտրական շենքերի հարուստ տեսականին, եզրակացնում է հեղինակը, գործառնական աեր կապերով կազմակերպում էին միջնադարյան առևտրական կյանքը, ստեղծելով կառույցների համախառն զուգադրումով կազմված, առևտրի որոշ տեսակի մեջ մասնագիտացված առևտրահասարակական բջջային խմբավորումներ՝ արտահայտված մերք անկանոն, փոքր հրապարակային դասավորությամբ, մերք կառույցների թաղային դասավորությամբ: Քաղաքին և հրապարակաձև հորինվածքի առևտրահասարակական բջիջները, զուգահեռ ֆաղափի ընդարձակմանը, հաջորդական դասավորությամբ ստեղծում էին՝ ըստ նյութական աղբյուրի տեղաբաշխված շուկաների մի փունջ, որոնք էլենելով ֆաղափի տեղանիքը՝ այստեղ զարգացել են գծային օրինաչափությամբ, հանդիսանալով միջնադարյան Հայաստանի առևտրահասարակական

համալիրների կարևորագույն օրինակներից մեկը»: Կերտմենչյանն ապացուցում է, որ միջնադարյան ֆաղափների առևտրահասարակական կենտրոններն ունեցել են կառուցման ընդհանուր ճարտարապետական սկզբունքներ:

Կարեն Բալյանի հոդվածը ուշագրավ է հարցերի մեկնաբանման ինֆեուրոյնությամբ: Քրենարկելով «Արդի հայ ճարտարապետության ազգային ինֆենտիպության» պրոբլեմը, նա նախ նշգրտում է արդի պայմաններում ավանդականի ու արդիականի համադրման յուրահատկություններ՝ սահմանելով ազգային ինֆենտիպության և արդիականության հասկացություններ: Հարտարապետության ազգային ինֆենտիպությունը, նրա կարծիքով, բնորոշվում է տվյալ ազգին հատուկ, նրա մշակույթի զարգացման արտաքին ու ներքին գործոններով՝ բնությամբ, պատմությամբ և կենցաղով որոշվող և նրա հոգևոր կերտվածքի վրա ազդող գծերի ամբողջությամբ: Այդ հարցում առանձնացնելով ճանաչողական տեսանկյունը՝ նա ավելացնում է. «Հարտարապետության ազգային ինֆենտիպության ճանաչողական մասը հիմնված է երեք խաբիսների վրա՝ բնություն, կենցաղ և պատմություն (հասկացողություններ ընդհանրացված են, առաջինը պարունակում է այն ամենը, ինչ վերաբերում է տարածությանը, բնական և արհեստական միջավայրին, երկրորդը՝ ավանդություններին, երրորդը՝ հարցի ընկերաբանական կողմին): Հեղինակը տարբերակում է երկու տարբեր մոտեցումներ ազգային առանձնահատկությունների նկատմամբ: Մինչև 1950 թվականներին բնորոշ է եղել նրա նորովի իմաստավորումը, գիտակցումը, նրա էական հիմքերին հասնելու ձգտումը: 60-ական թվականներից սկսում է ազգային ինֆենտիպության ստեղծագործական զարգացման շրջանը. որը էլնում է երևանի զրլխավոր հատակագծից: Հեղինակը ապացուցում է,

որ արդի հայ ճարտարապետության ազգային ինժեներատիպությունը հաճախ արտահայտվում է փակ ձևերում, որոնց բացահայտումը պահանջում է հատուկ մասնագիտական հետազոտություն: Նրա համար առաջնային են ոչ թե անցյալի ճանաչման ձևական զարգային և դասակարգերը, այլ նրա արտահայտումը բարդ, զուգորդված գործառնական, իմաստաբանական, կենցաղային խորհրդանիշների միջոցով, հորինվածքային մաշտաբան-տեխնոնիկ ամբողջության պահպանման և բնության մեջ ներխուժելու սկզբունքի միջոցով:

Հետազոտության է նորից երևանցի երիտասարդ գիտնական Վահրամ Քաթիկյանի հոգովածը հայկական գորգարվեստի մասին: Հեղինակը փաստերով ապացուցում է, որ դեռևս հելլենիստական ժամանակաշրջանից Հայաստանը հայտնի է եղել որպես ինժեներային գորգագործական զրպարաց ունեցող երկիր: Որպես ապրանք արդյունահանվելով՝ հայկական գորգը հանդիսացել է կիրառական արվեստի և բնագիտության մշակույթի փոխանցման միջոց: Այս պատճառով էլ նա արդարացիորեն պահանջում է, որ գորգերը պետք է դասավորել ըստ զարդապատկերների, ըստ դրանց հետ կապված իմաստաբանական համակարգերի և ոչ թե ըստ արժեքատեսակային հատկանիշների: Քաթիկյանը պաշտպանում է այն դրույթը, որ գորգային զարդանախշերը սկզբնապես եղել են տոմարանշաններ և հետո, ազգի ձեռնարկով ընդհանուր զուգահեռ, տարբեր ձևերով միավորվել են ավելի մեծ հորինվածքներում, պատկերներում: Այսպիսով, գորգարվեստի ուսումնասիրությունը կնպաստի նաև հայ ազգագրության, բանահյուսության, հեքիաստական պատկերացումների իմացությանը:

Հետազոտության է Մանվել Զինբաշյանի ուսումնասիրությունը ներսես Տայեցի կարողիկոսի մասին: Նա առաջ է առնում այն դրույթը, որ խալիֆաթի կողմից 640 թ. Դվինի գրավումից և Եզր կարողիկոսի մահից հետո ևաղափական ասպարեզ են գալիս երկու դեմքեր՝ Քեղոզու Ռշտունին և ներսես Երուզը: Վերջինս սկզբում ունեցել է պրոֆաղկեղտական միտումներ, հակադրվել է Քեղոզուսի ինժեներային ևաղափական և արարների հետ ակտիվ դիմադրատական կապ հաստատելուն: Հետագայում, սակայն, համոզվել է, որ Քեղոզու Ռշտունու գիծն ավելի ճիշտ է: Հեղինակը պաշտպանում է այն տեսակետը, որ ներսես Երուզը Դվինի 645 թ. ժողովի միջոցով փորձեց ամրապնդել եկեղեցու ներքին կառուցվածքը ու այն ավելի անկախ դարձնել աշխարհիկ ֆեոդալների ազդեցությունից: Որպես այդ ծրագրի մաս նա ձգտում է կարողիկասարանը հեռացնել երկրի վարչական կենտրոնից ու տեղափոխել նորակառույց Չվարթեց: Այսպիսով, Զինբաշյանը 7-րդ դարի հայ կյանքի դեպքերը լուսաբանում է երեք՝ հայ ժա-

ղովրդի ազատագրական պայքարի, աշխարհիկ և կրոնական ֆեոդալների միջև տարվող մրցակցության և ինժեներային ևաղափականության վարելի ցանկացողների գործունեության տեսակետներին:

Հետազոտության է նաև Սեդա Պարսամյան-Տատայանի հոգովածը, որտեղ փաստորեն բնակվում են հայ մանրակարչության զարգացման վրա հայ փիլիսոփայության ունեցած ազդեցության հարցը: «Հայ մանրակարչության նամի-նախտները՝ Քորուս Ռոսլին և Սարգիս Պիծակ» խորագրով ուսումնասիրության մեջ հեղինակը պաշտպանում է այն տեսակետը, որ հայ նամինախտը անհատ իրականության մասին իր ուսումնական հիմք է դարձրել կերպարանավորման ուսուցիչական և պիծակյան գեղագիտական սկզբունքների մշակման համար: «Բնագիտական կենտրոն վեներեն ու ծայրահեղ կենտրոններ են անդին, նամինախտը մարդկային անհատականության և անոր գործունեության դաշտը հանդիսացող անմիջական իրականության ինժեներային արժեքներում վերահաստատումն է», — պնդում է հեղինակը: Նա գտնում է, որ Քորուս Ռոսլինը ավելի մոտ է Աբելյարի նամինախտին, իսկ Պիծակը՝ Անսիմին: Ընդունելով հանդերձ գեղարվեստական մշակույթի վրա նամինախտի ունեցած հավանական ազդեցությունը, կարծում ենք, որ Գրիգոր Նարեկացու, «Մասնա ծնե» էպոսից և Աղբամարից հետո գեղարվեստական անհատականացման և կերպարանավորման սկզբունքների ծագումը ավելի ուշ առաջացած իմաստիրական դարձեցներից բխեցնելը այնքան էլ համոզիչ չի թվում: Բայց պետք է բնորոշել, որ Պարսամյանի հոգովածը ավելի լայն շրջանակներ բնորոշելով ուազգրավ դիտողություններ է առնում հայ ժողովրդի փիլիսոփայական և գեղագիտական գիտակցության վերաբերյալ: Հայ նամինախտի ակադեմիկոսների ազդեցությունը Գրիգոր Տարևանցու կյանքի ու գործունեությանն է ներվիրված Մեսրոպ Գրիգորյանի հոգովածը, որն ավելի նկարագրական բնույթ ունի:

Միջնադարյան հայ-արարական առեղծայիններին է վերաբերում Պերն Մալապաղյանի «Հայազգի Աբարեկ և Մուսուլի Սուլթան Պատր Էղզին Լուլու» խորագրով հոգովածը: Հեղինակը պատմում է խլարքի մի հայ երիտասարդի մասին, որը 13-րդ դ. սկզբներին գերի տարվելով Մուսուլ՝ աստիճանաբար բարձրանում է ևաղափ դեկավարության աստիճաններում ու դառնում նրա սուլթանը՝ տիրելով շուրջ կես դար: Պատր Էղզին Լուլու էլ Արմանին մեծապես նպաստել է Մուսուլի ճարտարապետության, պատմագրության, մանրակարչության, գրականության զարգացմանը: Հոգովածում հատուկ ուշադրություն է դարձվում Լուլուի հատած գրամների վրա:

Սուրեն Սահակյանը պատմական, լեզվական և բնագիտական մշակութաբանական փաստաթղթեր

րով հիմնավորում է այն բեզը, որ Այնթապի հայերը միջնադարում զաղթել են Նաիրի հին քաղաքապետության մեջ հիշատակված Անդիաբե, Անդիաբե, Այնթապ, Հանթապ բնակավայրից: Ենդ-տը ղենլով լեզվական փաստերի վրա, հեղինակը գրում է, որ Այնթապի բարբառը միջին դիր է գրավում Մշո և Մալաթիայի բարբառների միջև:

Լ. Մինեսայանը նկարագրում է Լոնդոնի, Քենհրանի և Նոր Զուղայի անհատական հավաքածուներում պահվող 10 ձեռագրեր (1480, 1582, 1630 թվականներին և 14, 18, 19, 20-րդ դարերում գրված): Հեղինակը տպագրել է 17-րդ դարում Խաչիկ Գրիչի կողմից հավանաբար Նոր Զուղայում գրված երգարանում գետեղված երգերի մի մասը:

«Հայկազյան հայագիտական հանդեսի» սույն համարը հարուստ նյութեր է պարունակում՝ նրվիրված նոր և նորագույն հայ պատմության հարցերին: «Նազի Գեոմանիո և Դան-բուրանականներու ծրագրերնր Կովկասի մեջ 1941 թ.» հոդվածում Ջ. Մարյանը ոչ միայն բացահայտում է Քուրմական ֆաշիստացող խավի դիմագրի, այլև բարձրացնում արդիական հեղինակություն ունեցող հարցեր: Հեղինակը ապացուցում է, որ ֆաշիստներն իրենց ռազմական գործունեություններին զուգահեռ ծրագրել էին Սովետական Միության սահմաններում հրահրել ազգամիջյան կոիվներ՝ հոգուտ իրենց օգտագործել ազգային փոխամասնությունների արտասահմանյան հատվածների ռեակցիոն շրջանակները: Այդ ծրագրեր մշակվել է Գյուրիզի «Կանաչ քրդապանակ»-ում: Հեղինակը ցույց է տալիս, որ Կովկասի ճակատագրեր շատ հուզել է նաև Արևմտյան դաշնակիցներին, որոնք այդ հարցի շուրջ զանազան բանակցություններ են ունեցել Քուրմիայի հետ: Օսմանյան կայսրության ավանդույթների պաշտպաններ և ժամանակի բուրժուազգիտականները մեծ ակտիվություն են ցուցաբերել Կովկասի ապագա ստատուսի վերաբերյալ ֆաշիստական ծրագրերում դիր նվաճելու ասպարեզում: Նրանք հույս են ունեցել, որ կարողանան Սովետական Միությունում ապրող իսլամական ժողովուրդների հողեր կցել բուրժուական հանրապետության: Սովետական Միության հաղթանակը աշխարհի ժողովուրդներին փրկեց սպառվող բոլոր այդ շարիհներից, ժողովուրդների կողոպուտից:

Խմբագրությունը հարազատ մնալով իր ավանդույթան, այս անգամ էլ հատուկ ուշադրություն է դարձրել հայ մամուլի պատմության հարցերին: Ժիրայր Դանիելյանի հրապարակած երկու հոդվածները ուշագրավ տեղեկություններ են տա-

լիս 19-րդ դ. հայտնի մշակութային գործիչ Հովսեփ Վարդանյանի հրապարակումների և արդի սփյուռֆահայ պարբերական մամուլի մասին: Հեղինակը համառոտակի նկարագրում է 1967—1980 թթ. սփյուռում լույս տեսած 140 անուն պարբերական: Այդ տարիներում 36 անուն նոր պարբերակներ է հրատարակվում ԱՄՆ-ում, 23 կիբանանում, իննական՝ Ֆրանսիայում, Կանադայում, Իրանում, վեցական՝ Ավստրալիայում, երկուսուսում, հեզական՝ Հունաստանում, Արգենտինայում, Կիպրոսում և Սիբիայում, երեքական՝ Անգլիայում, Պաղեստինում, Քուրմիայում, Եվեյցարիայում, Իտալիայում, մեկական՝ Բելգիայում, Բրազիլիայում, Հոլանդիայում, Ավստրիայում և Եվրոպայում: Ուշագրավ է երիտասարդական հրապարակումների անը:

Մինհան Մինեսայանը բնութեցողի ուշադրություն է հրավիրում ցարդ ուսումնասիրողների տեսադաշտից դուրս մնացած հայ պարբերականների վրա: Նա նկարագրում է 35 անուն պարբերակներ, որոնց կեսից ավելին խմորատիպ կամ ձեռագիր են, իսկ շուրջ 10-ը՝ լույս տեսած բնագաղթին անմիջապես հաշտողոլ տասնամյակի բնագրում:

Լ. Մինեսայանը իր ուսումնասիրությամբ որոշ պարզեցում է մտցնում 1819-ից մինչև 1875 թ. Հեղկաստանում հրատարակված 12 օրացույց տարեգրների բնութագրման հարցում: Այդ հրապարակումները օգտակար են հեղինակից զաղուրի պատմության ուսումնասիրության համար:

Պրակում հետախուրական նյութեր են հրապարակվել, որոնք որոշ լույս են սփռում Վահան Քենիյանի, Բարսեղ Կանաչյանի ու Կաստան Զարյանի կյանքի ու գործունեության առանձին դրվագներ վրա:

Հարուստ է հանդեսի գրականությունների բաժինը, որտեղ վերլուծվել են հայրենիում և սփյուռում հրապարակված հայագիտական ուսումնասիրությունները:

Մահագրություններ են տպագրված ՀՍՍՀ ԳԱ ըրթակից-անդամ Վազգեն Զալոյանի, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գուրգեն Սևակի, Բեյրութի «Հարսուն» քերթի խմբագիր Գեոսամ Անարունյանի, ճարտարագետ Մարգիտ Ճիվանիչյանի, պատմաբան Հայկազ Ժամկոչյանի, երգահան Աշոտ Պատմագրյանի, բանասիրական գիտությունների դոկտոր Գրիգոր Հակոբյանի, Սփյուռֆահայ հասարակական գործիչ Լևոն Զորմիսյանի և փիլ. գիտությունների դոկտոր պրոֆեսոր Հենրի Գարբիելյանի մահվան առթիվ: